



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ

«09» 05 2018թ.

No 06/3-4/23 485-18

Ձեռք No _____

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՓՈՔՐ ԵՎ ՄԻՋԻՆ
ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԱՊԱՀՆԵՐԻ
ԱՍՈՑԻԱՑԻԱ» ՀԿ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ Վ. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆԻՆ
ՊԱՏՃԵՆԸ՝ ՀՀ ԿԱ ՊԵԿ ՓՈՔՐ ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂՆԵՐԻ
ՀԱՐԿԱՅԻՆ ՏԵՍՉՈՒԹՅՈՒՆ-ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ
ՊԱՐՈՆ Ռ. ՄԱՇԱԴՅԱՆԻՆ
ՀՀ ԿԱ ՊԵԿ ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ
ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ
ՊԱՐՈՆ Վ. ՍԻՍԱԿՅԱՆԻՆ

Ի պատասխան Ձեր 09.04.2018թ.

թիվ Պ-16 գրության

Հարգելի պարոն Համբարձումյան

Հիմք ընդունելով ՀՀ հարկային օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետը և 307-րդ հոդվածի 3-րդ մասը՝ իրազեկման կարգով հայտնում ենք հետևյալը:

ՀՀ հարկային օրենսգրքի՝

- 56-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կազմակերպությունը, անհատ ձեռնարկատերը և նոտարը ապրանքի մատակարարման, աշխատանքի կատարման և (կամ) ծառայության մատուցման գործարքների մասով պարտավոր են դուրս գրել Օրենսգրքով սահմանված համապատասխան հաշվարկային փաստաթղթեր,

- 56-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ հաշվարկային փաստաթղթերը դուրս են գրվում էլեկտրոնային եղանակով, բացառությամբ՝

1) հսկիչ դրամարկղային մեքենայի կտրոնի, ինչպես նաև այն հաշվարկային փաստաթղթերի, որոնցում պարունակվում է գաղտնիք համարվող և (կամ) սահմանափակ օգտագործման ենթակա տեղեկատվություն,

2) ՀՀ կառավարության սահմանած դեպքերի, երբ հաշվարկային փաստաթղթերը կարող են դուրս գրվել ՀՀ կառավարության սահմանած կարգով:

«Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի «գ» կետի համաձայն՝ բժշկական օգնության դիմելիս, ինչպես նաև բժշկական օգնություն և սպասարկում ստանալիս յուրաքանչյուր ոք իրավունք ունի պահանջել բժշկի օգնությանը դիմելու փաստի, իր առողջական վիճակի, հետազոտման, ախտորոշման և բուժման ընթացքում պարզված տեղեկությունների գաղտնիության ապահովում, բացի ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերից:

Նշված օրենքի կիրարկումն ապահովող՝ ՀՀ կառավարության 2012թ. սեպտեմբերի 20-ի N1207-Ն և 2012թ. սեպտեմբերի 27-ի N1212-Ն որոշումների համաձայն՝ հետազոտության կատարման ընթացքում ստացված տեղեկությունները, հետազոտության վերաբերյալ եզրակացությունը, ախտաբանաանատոմիական փորձաքննության արդյունքում ստացված տեղեկությունները, ինչպես նաև դրա արդյունքում կազմված եզրակացությունը համարվում են բժշկական գաղտնիք և պահպանվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Հաշվի առնելով վերոնշյալը, հայտնում ենք, որ գրությամբ նշված դեպքում ֆիզիկական անձանց մատուցվող բժշկական ծառայությունների մասով դուրս գրվող հաշվարկային փաստաթղթերը կհամարվեն գաղտնիք համարվող տեղեկատվություն պարունակող վերը նշված՝ բժշկական գաղտնիք համարվող տեղեկատվություն պարունակելու դեպքում:

Հայտնում ենք նաև, որ ֆիզիկական անձի կողմից միայն բժշկին դիմելը դեռևս բավարար հիմք չէ հաշվարկային փաստաթուղթը թղթային եղանակով դուրս գրելու համար, քանի դեռ առկա չէ վերը նշված՝ բժշկական գաղտնիք համարվող տեղեկատվությունը:

Հարգանքով՝



Վ. ՄԻՐՈՒՄՅԱՆ